

## Տեղեկատվություն

**ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության և ՀՀ առողջապահության նախարարության Արարատի մարզի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացի մոնիթորինգի արդյունքում համատեղ իրականացված միջոցառումների վերաբերյալ**

ՀՀ Արարատի մարզում 2013թ. մայիսի 29-ից հուլիսի 13-ն ընկած ժամանակահատվածում իրականացված իմունականխարգելման գործընթացի մոնիթորինգի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության 22.10.2013թ.թիվ ԴԴ/04/11683-13 գրության մեջ նշված բժշկական հաստատությունների տնօրենների, իմունականխարգելման գործընթացի պատասխանատուների, ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Արարատի մարզային կենտրոնի պետի, «Արարատի մարզային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի և մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետի մասնակցությամբ կազմակերպվել է քննարկում ՀՀ գլխավոր պետական սանիտարական բժշկի մոտ: Քննարկման արդյունքում հանձնարարություններ տրվեցին արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:

Արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ հանձնարարականներ են տրվել բժշկական հաստատությունների տնօրեններին, նաև ամենամյա խորհրդակցության ժամանակ մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից:

Արձանագրված թերությունների մեծ մասը վերացվել են:

Ուսումնասիրությունները շարունակվում են և նախատեսվում են նոր քննարկումներ: